

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2013Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2013թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 255.5 հազար, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության 8.4%-ը, որից 138.3 հազ. քաղաքաբնակներ են (54.1%), 117.2 հազարը՝ գյուղաբնակներ (45.9%):

2013թ. առաջին եռամսյակում մարզում ծնվել է 816 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 4-ով պակաս, մահացածների թիվն ավելացել է 5-ով և կազմել 630 մարդ: Բնական աճը կազմել է 186 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1-ով և կազմել է 417, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 20-ով՝ կազմելով 72:

2013թ. առաջին եռամսյակի ընթացքում (ընթացիկ գներով) մարզում թողարկվել է 37830.0 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, որը կազմում է Հանրապետությունում արտադրված արտադրանքի 13.1%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է արտադրվել 11851.1 մլն. դրամի արտադրանք կամ աճը կազմել է 45.6%): Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 1381.5 մլն. դր., էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ շուրջ 326.3 մլն. դր.: Աճը գրանցվել է հիմնականում խմիչքների (29.3%), դեղագործական ապրանքների (20.0%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (20.3%), կաշվե իրերի (40.4%) արտադրության բնագավառներում:

2013թ. առաջին եռամսյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 38073.5 մլն. դրամ նախորդ տարվա 26049.2 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 46.2 %:

Արտադրանքի իրացման ծավալների մեջ հաշվետու ժամանակաշրջանում իրացումը ներքին շուկայում կազմել է 30064.2 մլն. դրամ, իսկ արտահանումը՝ 8009.3 մլն. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 7283.6 մլն. դրամի և այլ երկրներ՝ 725.7 մլն. դրամի արտադրանք: 2013թ. առաջին եռամսյակում արտահանման ծավալը 2012թ-ի համեմատ աճել է 36.4 %-ով:

| | 2012թ. I եռ. | 2013թ. I եռ. | շեղում +/- | % |
|-----------------------------|-----------------|-----------------|---------------|-------|
| Թողարկված արտադրանքի ծավալը | 25978.9 | 37830.0 | 11851.1 | 145.6 |
| Արտադրանքի իրացման ծավալը | 26049.2 | 38073.5 | 12024.3 | 146.2 |
| Արտահանման ծավալը, որից՝ | 5872.8 | 8009.3 | 2136.5 | 136.4 |
| ԱՊՀ երկրներ | 5032.5 | 7283.6 | 2251.1 | 144.7 |
| այլ երկրներ | 840.3 | 725.7 | -114.6 | 86.4 |

Ներկայումս մարզում գործում են 170 արտադրական ձեռնարկություն, մանրածախ առևտրի 1419 օբյեկտներ, 5 սպառողական ապրանքների և 2 գյուղարտադրանքի

շուկաներ: Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2013թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 8766.9 մլն. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 2216.2 մլն. դրամով (աճը՝ 33.8 %):

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 6142.4 մլն. դրամ նախորդ տարվա 5931.1 մլն. դրամի դիմաց կամ աճը կազմել է 3.6 % :

Մարզում գործազրկության ցուցանիշը մոտ 0.4%-ով բարձր է հանրապետական միջինից: 2013թ. մայիսի 1-ի դրությամբ մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված գործազուրկների թիվը կազմել է 5500 մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 448-ով:

| Բովանդակություն | Հրազդան | Արուսյան | Եղվարդ | Չարենցավա ն | Ընդա- մենը |
|--|---------|----------|--------|----------------|---------------|
| Ընտանեկան նպաստ ստացող ըն- տանիքների թիվը /2013թ.մայիս / | 2,306 | 2,760 | 1,984 | 1,530 | 8,580 |
| Ընտանեկան նպաստ ստացող ըն- տանիքների թիվը /2012թ. մայիս / | 2,127 | 2,580 | 1,795 | 1,436 | 7,938 |
| Գրանցված գործազուրկների թիվը/ 2013թ. մայիս / | 1,186 | 1,861 | 518 | 1,945 | 5,510 |
| Գրանցված գործազուրկների թիվը/ 2012թ. մայիս / | 1,239 | 2,175 | 719 | 1,825 | 5,958 |

Մարզի նպաստառու ընտանիքների թիվը 8580 է, որը նախորդ տարվա համեմատ ավել է 642-ով:

Մարզում բնակվում են 40,293 կենսաթոշակառուներ: Ներկայում մարզի 102 գոհված և 149 վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ հաշվառված են բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակներում: Բնակարանի կարիք ունեն նաև ժամանակավոր կացարաններում բնակվող 326 փախստական ընտանիքներ:

2013թ. առաջին եռամսյակի ընթացքում մարզում բոլոր աղքատներով իրականացվել են 4631.3 մլն. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1559.9 մլն. դրամով և կազմում է հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 11.9 %-ը:

2013թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1052.0 մլն. դրամ մարզի կրթական և մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով (14 կրթական, 2 մարզական, 3 մշակութային օբյեկտներ): Վերջին տարիներին իրականացված դպրոցաշինության համալիր ծրագրի արդյունքում էապես բարելավվել է դպրոցական շենքերի վիճակը: Ներկայումս առաջնային խնդիր է մարզադահլիճների և խաղահրապարակների կառուցումը:

ՀՀ պետական բյուջեից մարզային նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 80.9 մլն. դրամ և 437.6 մլն դրամ միջպետական և հանրապետական նշանակության ավտո-

ճանապարհների ճմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար:

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության մեջ առաջնային տեղ է զբաղեցնում, որտեղ զբաղվածները կազմում են մարզի բնակչության ընդհանուր թվի 36.7%-ը: Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: 2013թ. առաջին եռամսյակում մարզում իրացվել է 1.8 հազ. տոննա միս նախորդ տարվա 1.6 հազ. տոննայի համեմատ կամ աճը կազմել է 12.5%, ինչպես նաև 13.1 հազ. տոննա կաթ (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 5.6%) և 26.8 մլն. հատ ձու (նախորդ տարվա արտադրանքի 84.8%-ը):

2013թ. բերքի տակ կատարվել է 6400 հա աշնանացանի ցանք նախորդ տարվա 6220 հա-ի դիմաց: Գարնանը նախատեսված է կատարել 6615 հա գարնանացան մշակաբույսերի ցանք նախորդ տարվա 6200 հա-ի դիմաց, որից մայիսի 1-ի դրությամբ կատարվել է 4138 հա:

2013թ. գարնանը գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար ՀՀ պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզին տրամադրվել է 1675 տ. ազոտական պարարտանյութ և 403 հազ. լիտր դիզելային վառելանյութ: 620 հա-ի վրա կրծողների դեմ պայքարի աշխատանքների իրականացման նպատակով Արագյուղ համայնքին անհատույց տրամադրվել է 74.4 կգ ցինկի ֆոսֆիդ: